ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2016 թ.

№ 10 (995)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 51 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն օգոստոսի 24-ին ընդունել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությանը՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են բուհի հետ համագործակցությանն առնչվող հարցեր: Երկրի ղեկավարն ընդգծել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ փոխգործակցության անհրաժեշտությունը՝ իր երախտագիտությունը հայտնելով հաստատության անձնակազմին Արցախին մշտապես ցուցաբերվող աջակցության համար:

«Մենք ներկայացրինք այն հնարավորությունները, որ ունի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և թե ինչ կարող ենք առաջարկել Լեռնային Ղարաբաղի կրթական-մշակութային կյանքը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար,- ասել է ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը՝ հավելելով, որ մասնագիտական գիտելիքների կատարելագործման ուղղությամբ Մանկավարժականը կարող է օգտակար լինել: Նա հատկապես ընդգծել է մեր հատուկ մանկավարժների և հոգեբանների համագործակցության դերը:-Մեր համալսարանը և ԼՂՀ հաստատություններն ու պետական մարմինները համատեղ կիրականացնեն անհրաժեշտ ծրագրեր, որոնց արդյունավետությունը ակնհայտ կլինի Արցախի կրթական հաստատությունների համար»:

Հանդիպմանը մասնակցել է նաև ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը:

Նոր ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց ՀՊՄՀ ուսանողների պրակտիկան անցկացնող դպրոցների տնօրենների և փոխտնօրենների հետ՝ միասին քննարկելու ապագա անելիքներն ու նախորդ տարիների բացթողումները:

Պրակտիկայի բարեփոխումները նկատելի են

Ռեկտորը նշեց, որ մանկավարժական պրակտիկայի բարեփոխումներն արդեն իսկ նկատելի են. առաջին հերթին բուհը նվազեցրել է կրթական հաստատությունների թիվը՝ նախկին 200-ի փոխարեն 2016-2017 ուսումնական տարում ՀՊՄՀ-ի ուսանողներն իրենց պրակտիկան կանցկացնեն 15 հիմնական և ավագ դպրոցում:

Ներկաները շնորհակալություն հայտնեցին իրենց վստահելու համար և բարձր գնահատեցին բուհի աշխատանքով պայմանավորված ուսանողների պատրաստվածությունն ու առաջադիմությունը: Լավ մանկավարժ դառնալու գործում նրանք կարևորեցին հատկապես պրակտիկայի դերը և նկատեցին, որ այն պետք է կազմակերպել ուսումնառության ողջ ընթացքում: Ներկաները ցանկություն հայտնեցին, որ «ուսուցչի օգնական» գաղափարը մուտք գործի դպրոց և լիարժեք կատարի իր գործառույթը: «Որքան բարձր լինի հասարակության մեջ ուսուցչի

➤ 2

ԱՄՆ-ի համալսարանի պրոֆեսորը կդասավանդի Մանկավարժականում

ԱՄՆ-դասախոսների փոխանակման ֆուլբրայթ ծրագրի շրջանակում մեկ կիսամյակ Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետում կդասավանդի ԱՄՆ-ի Քոնքորդիա համալսարանի պրոֆեսոր Քևին Միլլերը: Օտարերկյա դասախոսի երկարաժամկետ նման դասավանդման փորձ բուհում առաջին անգամ է իրականացվում:

Մինչ ուսումնական տարվա մեկնարկը պրոֆեսորն այցելեց համալսարան, հանդիպեց բուհի և Հատուկ կրթության ֆակուլտետի ներկայացուցիչների հետ՝ ծանոթանալու և քննարկելու ապագա անելիքները: Հանդիպման ընթացքում ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության աշխատանքների գծով պրոռեկտոր Արա Երեմյանը ողջունեց հյուրի մուտքը Մանկավարժական համալսարան և ընդգծեց, որ բուհի համար մեծ պատիվ ու ձեռքբերում է, երբ նման մասնագետը դասավանդում է ՀՊՄՀ-ում:

«Համալսարանը կարևորում և մշտապես ուշադրության կենտրոնում է պահում հատուկ կրթության ոլորտը: Մենք տարածաշրջանում հատուկ մանկավարժներ պատրաստող միակ կրթական հաստատությունն ենք»,- ասաց պրոռեկտորը:

«Այս համագործակցությունը հաճելի և երկարատև աշխատանքի արդյունք է: Մենք հաջողակ ենք, քանզի հնարավորություն ունենք աշխատել նման մասնագետի հետ: Սա բուհի միջազգայնացման գործում շատ

➤ 2

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Օգոստոսի 31-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց ՀՊՄՀ դասախոսների և ղեկավար աշխատակազմի հետ: Նա շնորհավորեց բոլորին նոր ուսումնական տարվա առթիվ, ապա ներկայացրեց վերջին տարիների վիճակագրությունը դիմորդների ընդունելության և շրջանավարտների համեմատական վերլուծությամբ:

Ըստ այդ վիճակագրության՝ վերջին տարիներին ուսանողների թիվը գրեթե պահպանվել է, այնուամենայնիվ, իրականության մեջ լուրջ խնդիրներ կան՝ կապված բուհական տարբեր գործոնների հետ:

Խոսելով ուսումնական գործընթացը հետաքրքիր դարձնելու միտումների մասին՝ ռեկտորը հորդորեց դասախոսներին՝ ամենօրյա գործունեությամբ համալսարանը հետաքրքիր ու գրավիչ դարձնել դիմորդների համար:

Այնուհետև Ռ. Միրզախանյանն անդրադարձավ ինտերակտիվ ուսուցման անցնելու գործընթացին, հետազոտական համալսարան դառնալուն միտված ծրագրերին, մագիստրոսական թեզերի ինքնուրույնությանը, գիտելիքների ստուգման նոր համակարգին, ըստ վարկանիշի և գործունեության՝ դասախոսների աշխատավարձերին, ուսման վարձերի պահպանմանը և համալսարանի վարած քաղաքականության այլ խնդիրների:

Ամփոփելով ասելիքը՝ ռեկտորը բոլորին մաղթեց արդյունավետ աշխատանք նոր ուսումնական տարում:

Ս. ԱՍՐՅԱՆ

Պրակտիկայի բարեփոխումները նկատելի են

➢1 հանդեպ գնահատականը, նույնքան կկարևորվի Մանկավարժական համալսարանի դերը կրթական համակարգում»,-նշեցին ներկաներն ու հավելեցին, որ վերջին տարիներին ակնառու է ՀՊՄՀ-ի առաջընթացն ու վարկանիշի բարձրացումը:

Ներկաները պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը՝ գրաֆիկների կազմումից մինչև ուսանողների գնահատում: Վ. Սարգսյանը նկատեց, որ երկկողմանի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է միանալ բուհում ներդրված առցանց ուսուցման համակարգին:

Ռուբեն Միրզախանյանը տնօրեններին ծանոթացրեց նաև բուհում կատարվող փոփոխություններին, միջազգային համագործակցությանը, տարբեր մասնագիտությունների գծով գերհագեցած լաբորատորիաների աշխատանքին՝ ընդգծելով, որ միայն համատեղ աշխատանքի շնորհիվ կարելի է հասնել ցանկալի արդյունքի: Հանդիպման ավարտին ռեկտորը ևս մեկ անգամ նշեց, որ բուհը միշտ պատրաստ է ակտիվ համագործակցության՝ համատեղ օլիմպիադաների կազմակերպումից մինչև դասալսումներ, ինչպես նաև հանդիպումներ պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Օգոստոսի 25-ին կայացավ Մանկավարժական համալսարանի՝ 2016-2017 ուսումնական տարվա առաջին գիտական խորհրդի նիստը: Բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ամսվա հոբելյարներ Սուսաննա Փիլոսյանին, Գարուշ Պետրոսյանին, Ջուլիետա Գյուլամիրյանին, Ռոբերտ Ավանեսյանին և Արմենուհի Մուրադյանին շնորհավորեց ծննդյան, իսկ խորհրդի անդամներին՝ նոր ուսումնական տարվա առթիվ՝ մաղթելով հաջողություններ և արգասաբեր գործունեություն:

ՀՊՄՀ միջազգային համագործակցության աշխատանքների գծով պրոռեկտոր Արա Երեմյանը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, կիրառման և դրանց զարգացման միտումների մասին հարցը: Նա հիմնականում խոսեց համալսարանի եռալեզու armspu.am պաշտոնական կայքի նորացված տարբերակի, նրա տեխնիկական հավելյալ բնութագրիչների մասին, «Առցանց ուսուցում»-«Google Classroom» կրթական համակարգի փոխկապակցված աշխատանքի մասին, որի արդյունքում ուսումնական գործընթացում անմիջական և տեսանելի կապ է հաստատվել «ուսանող-դասախոս» և «ուսանող-դասախոս-դեկանատ- օդակների միջև: Դա կարող է արվել օգտատիրոջը հասանելի ցանկացած թվայնացված սարքով:

«Այս ուսումնական տարում համալսարանի ամբողջ ուսումնական գործընթացն իրականացվելու է բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ: Ուսումնամեթոդական փաթեթներն ամբողջ ծավալով կարող են ներբեռնվել համակարգ.- ասաց պրոռեկտորը:-էլեկտրոնայնացվել են նաև ուսումնական բեռնվածքի կազմման և գիտելիքների գնահատման գործընթացները, դիպլոմների հավելվածների կազմումը, ավտոմատացվել է ուսանողական զեղչերի կազմման գործընթացը: Ներդրվել և փորձարկվել է համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն էլեկտրոնային եղանակով անցկացնելու համակարգը:

Թվայնացված տեխնոլոգիաներն արդյունավետ օգտագործվում են նաև համալսարանի հանրային ներգրավվածության, սոցիալական համագործակցության և ծառայությունների նպատակի համար (օրինակ, Գիտական գրադարանում շուրջ 5000 միավոր գրքերի էլեկտրոնային տարբերակի ստեղծումը, նաև Գրադարանում ինտերնետային հասցեների բազայի ստեղծումը շուրջ մեկ միլիոն գրքերի մշակման հնարավորությամբ, «Հաջողության բանաձև» հաղորդաշարը, «Ռադիոֆաման» և այլն):

Ըստ պրոռեկտորի՝ 2015թ.-ին ներդրված Հայկական Օրագրեր - Ձեռնարկություն խոշոր էլեկտրոնային փաթեթի կիրառման արդյունքում համալսարանի ֆինանսա-տնտեսական գործունեությունում և կադրային քաղաքականությունում ապահովվել է բարձր աստիճանի թափանցիկություն, հաշվետվողականություն, վերահսկողություն, կտրուկ նվազել են մարդկային սուբյեկտիվ գործոններով պայմանավորված անճշտությունների ռիսկերը:

Համալսարանը հետևողականորեն իրականացնում է տարածքները բարձր տեխնոլոգիաներով համալրելու, բարոյապես և ֆիզիկապես մաշված տեխնոլոգիաները արդիականացնելու կամ վերազինելու գործունեություն:

Գիտական քարտուղար Հասմիկ Պետրոսյանը խորհրդի անդամներին ներկայացրեց համալսարանի գիտական խորհրդի 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքների ծրագիրը, ինչը միաձայն ընդունվեց խորհրդի անդամների կողմից:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին հայտ ներկայացրած երկու թեկնածուներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Դավթյանը և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Գալստյանը խորհրդի անդամներին ներկայացրին ֆակուլտետի զարգացման իրենց ծրագրերը, ուսումնական գործի կազմակերպման, գիտակրթական ոլորտում, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ համատեղ աշխատանքում իրենց անելիքները:

Գիտական խորհրդի 66 անդամներից նիստին ներկա էին 58-ը, ովքեր փակ գաղտնի քվեարկությամբ 46 կողմ, 10 դեմ և 2 անվավեր ձայների հարաբերակցությամբ Բանասիրական ֆակուլտետի դեկան ընտրեցին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Գալստյանին:

Փակ քվեարկությամբ ընտրվեցին նաև 3 ամբիոնների վարիչներ. Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ ընտրվեց միակ թեկնածու, բժշկական գիտություններ դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Գրիգորյանը, երաժշտության ամբիոնի վարիչ վերընտրվեց ՀՀ վաստա-կավոր արտիստ Արա Գևորգյանը, իսկ Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնում՝ պրոֆեսոր Ռուբեն Երզնկյանը):

Գիտական խորհրդի նիստում քննարկեցին նաև ընթացիկ հարցեր:

ԱՄՆ-ի համալսարանի պրոֆեսորը կդասավանդի Մանկավարժականում

տանում ԱՄՆ դեսպանատան մշակութային, կրթական ծրագրերի մասնագետ Հասմիկ Միքայելյանը: Նա ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունն արդեն ավանդույթ է դարձել, կարևորեց երկկողմանի այս համագործակցությունը և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Քևին Միլլերը Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրոսներին կդասավանդի «Նորարարական տեխնոլոգիա-

կարևոր է. մեր ուսանողներին բացառիկ հնարավորություն է ընձեռվում նոր գիտելիքներ ստանալ և ծանոթանալ մասնագիտական ոլորտի ամերիկյան բազմաթիվ մոտեցումներին»,- ասաց Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանը: Նա շնորհակալություն հայտնեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը՝ ոլորտի նկատմամբ մշտապես հետաքրքվածություն և սրտացավություն ցուցաբերելու համար:

Քևին Միլլերը շնորհակալություն հայտնեց այս գործում իրեն վստահելու և սիրալիր հյուրընկալության համար:

«Մեծ խանդավառությամբ եմ մոտենում դասավանդմանն ու իրականացվելիք հետազոտական աշխատանքներին: Շատ գաղափարներ ունեմ և վստահ եմ, որ միասին կկարողանանք իրականացնել ու կարձանագրենք հաջողություններ»,- հավելեց պրոֆեսորը և հույս հայտնեց՝ համագործակցությունը կլինի արդյունավետ:

Հյուրին ուղեկցում էր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան մշակութային, կրթական ծրագրերի մասնագետ Հասմիկ Միքայելյանը: Նա ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանի հետ համագործակցությունն արդեն ավանդույթ է դարձել, կարևորեց երկկողմանի այս համագործակցությունը և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Քևին Միլլերը Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրոսներին կդասավանդի «Նորարարական տեխնոլոգիաները՝ հատուկ կրթության ոլորտում», «Խոսքի խանգարումների նյարդալեզվաբանական, նյարդահոգեբանական վերլուծություն», իսկ բակալավրիատում՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում» առարկաները: Դասավանդման ընթացքում պրոֆեսորը հանդես կգա նաև բաց դասախոսություններով՝ ներառական դպրոցների և վերականգնողական կենտրոնների մասնագետների համար:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ Է ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ»

Սեպտեմբերի 1-ը ազդարարեց ուսումնական տարվա սկիզբը: Նոր ուսումնական տարվա մեկնարկի, գիտելիքի, գրի և դպրության օրը տոնական էր Մանկավարժական համալսարանում: Բուհի ղեկավարները, պրոֆեսորադասախոսական կազմը օրվա առթիվ շնորհավորեցին 10 ֆակուլտետների ուսանողներին՝ ողջունելով առաջին կուրսեցիների մուտքը բարձրագույն ուսումնական հաստատություն:

Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին շնորհավորեց ուսանողական խորհրդի նախագահ Էդգար Ապրեսյանը՝ հորդորելով ակտիվորեն ներգրավվել համալսարանական բազմազան ու հետաքրքիր միջոցառումներում:

Ֆակուլտետի «Տարվա լավագույն ուսանող» Աննա Սարգսյանը հիշեցրեց. «Ցանկացած ճանապարհ, որը տանում է դեպի նպատակը, սկսվում է մեր առաջին քայլից» և կոչ արեց համարձակ անել այդ քայլը՝ ձգտելով լավագույնին:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանը խոսեց կրթության ու գիտելիքի կարևորության, համալսարանի առաջընթացի և եվրոպական համալսարանների հետ համընթաց քայլելու, ինչպես նաև ուսանողակենտրոն գործընթացների մասին:

Պրոֆեսորն իր խոսքն ամփոփեց աշխարհի հնագույն գրքերից մեկից՝ «Գիրք պիտոյից»-ից մեջբերումով. «Կրթություն է ամենայն ինչ»:

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը շնորհավորեց առաջին կուրսեցիներին իրենց կյանքի լավագույն՝ ուսանողական շրջանի կապակցությամբ՝ նրանց կոչելով գրականության ու լեզվի դեսպաններ:

«Գրականությունն օգնում է մարդկանց՝ նորոգելու իրենց հոգեաշխարհը: Դուք պետք է հասկանաք ու գնահատեք մեր գրականությունը, որովհետև նա է տալիս շատ կարևոր հարցերի պատասխանները»:

Պրոֆեսոր Ս. Դանիելյանը հորդորեց առաջին կուրսեցիներին՝ պահպանել ֆակուլտետի առաջնայնությունը համալսարանում և նպաստել նրա առաջընթացին ու վարկանիշի պահպանմանը:

Հանդիպումն ամփոփեց ֆակուլտետի նորընտիր դեկան Աշոտ Գալստյանը: Նա հիշեցրեց, որ այս ֆակուլտետը տվել է շատ անվանի շրջանավարտներ, որոնց թվում կան տաղանդավոր գրողներ, ապա շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի առաջին կուրսեցիներին՝ Մանկավարժական մայր բուհի բանասիրական ֆակուլտետին վստահելու և նախապատվություն տալու համար: Դեկանն իր խոսքն ավարտեց բանաստեղծությամբ, որով կոչ արեց չընկճվել ու չվախենալ դժվարություններից, լինել լավատես ու միշտ քայլել առաջ:

Ըստ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանի՝ ուրախալի փաստ է տարեցտարի արձանագրվում. «Ուսանողները տարեցտարի շատ ավելի գործնական, պրագմատիկ մոտեցում են ցուցաբերում իրենց դասավանդմանը: Նրանք հստակ պատկերացնում են ինչ մասնագիտություն ընտրել: Իրենց ծնողների հետ ուսումնասիրում են աշխատաշուկան՝ տեսնելով որոշակի ապագա այդտեղ: Ուրախ եմ, որ այդ ապագան նրանք կապում են ուսուցչի մասնագիտության հետ: Նշանակում է ազգային մակարդակով ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրություն կա»:

Դեկանի կարծիքով ուսանողները տարեցտարի կարողանում են առավել արդյունավետ օգտվել սոցիալական կայքերից, առցանց տարբեր հարթակներից, ինչը նրանց ուսումնառությունն ավելի դյուրին է դարձնում:

Առաջին կուրսեցիներին ծանոթացնելով համալսարանի և մասնավորապես Օտար լեզուների ֆակուլտետի ուսումնառության առավելություններին՝ լավատես դեկանը հորդորեց բոլորին՝ անկեղծ լինեն իրենց ձգտումներում և իրենք իրենց հետ:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը առա-

...ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ»

ջին կուրսեցիներին վստահեցրեց. «Ձեր երիտասարդության բովանդակ տարիները կապվելու են հենց ուսանողական տարիների հետ. սա մի շրջափուլ է, որը կդառնա գիտելիքի, կրթության ձեռքբերման և մասնագիտական որակների ժամանակահատված»:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում ևս տոնական մթնոլորտ էր: Դեկան Գագիկ Դեմիրխանյանը շնորհավորելով և մեծ ձեռքբերումներ մաղթելով ուսանողներին՝ հույս հայտնեց, որ 4 տարի անց նման խանդավառությամբ նրանք կստանան ավարտական դիպլոմները:

Այնուհետև ուսանողները շրջեցին բուհում, ծանոթացան ֆակուլտետին և նրա գործունեությանն ու ժամանակակից տեխնոլոգիաններով հագեցած լաբորատորիաներին:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետն ապագա հոգեբան-սոցիոլոգներին դիմավորեց մասնագիտության խորհրդանշով զարդարված լսարանում. 1-ին կուրսեցիներին շնորհավորեցին նաև պրոռեկտորները, իսկ դեկան Ռուզաննա Պետրոսյանն իր խոսքում ընդգծեց.«Ձեր առաջադիմությամբ, կրթական բարձր պատրաստվածությամբ Մանկավարժական համալսարանում սովորելու իրավունք եք վաստակել, ինչը մեծ պատիվ ու պատասխանատվություն է»: Նա մաղթեց, որ ուսումնառության տարիները լինեն ոչ միայն մասնագիտական բարձր որակների ձեռքբերման, այլև մարդկային արժանապատիվ կեցվածքի և երկրի լիարժեք քաղաքացու ձևավորման տարիներ»:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզան

Սադոյանն էլ ուսանողներին բարի երթ մաղթելով՝ նկատեց, որ բնագիտական ուղղվածություն ունեցող ֆակուլտետի բոլոր մասնագիտությունները հետաքրքիր են և ուղղակիորեն կապված կյանքի և բնության հետ, իսկ ամբիոնների վարիչներն էլ ընդգծեցին՝ ինտերակտիվ ուսուցման նոր մեթոդներն առավել հետաքրքիր կդարձնեն ուսանողների առօրյան, արտալսարանային պրակտիկաներն էլ կնպաստեն մասնագիտության մեջ հմտանալուն:

«Ուրախ եմ, որ ընտրել եք այս ֆակուլտետն ու հենց այս ոլորտը: Վստահեցնում եմ՝ չեք զղջալու մասնագիտության ընտրության հարցում: Մեզ մոտ միջավայրն ու մոտեցումը ընտանեկան են, դուք ձեր ընտանիքից դուրս գալով մուտք եք գործում մեկ այլ ընտանիք: Բարի գալուստ մեր մեծ ընտանիք»,- այս խոսքերով ուսանողներին ողջունեց Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմինե Ավագյանը: Նա մաղթեց ուսանողական անհոգ տարիներ, և բայց արել ենք ամեն ինչ այն հետաքրքիր դարձնելու համար»,- 1-ին կուրսեցիների դիմեց Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը: Նա վստահեցրեց, որ ուսումնառության տարիների ընթացքում իրենք կձգտեն ուսանողներին զինել ոչ միայն գիտելիքներով, այլև մասնագիտական ուղին անարգել անցնելու համար կարևոր խորհուրդներով:

Կուլտուրայի ֆակուլտետը ևս տոնական ջերմ մթնոլորտում դիմավորեց առաջին կուրսեցիներին: Ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանն անդրադարձավ բուհի անցյալին և ներկային՝ ընդգծելով, որ ինչպես երեկ, այնպես էլ այսօր, բուհը երկրին տալիս է ոչ միայն լավագույն մասնագետներ, այլև հերոսներ: Վառ օրինակը ապրիլյան պատերազմում զոհված 20-ամյա սերժանտ Նորայր Գասպարյանն է, ով իր արյան գնով պաշտպանեց հայրենիքը. «Ցանկանում եմ, որ այս ուսումնական հաստատությունն ավարտեք շարունակելով նախորդների հաստատած ավանդույթը, դառնալով այնպիսի մասնագետներ, որոնք պահանջված կլինեն հանրապետությունում և նրա սահմաններից դուրս՝ ի շահ մեր պետության, վաղվա սերնդի, որոնց դուք պետք է կրթեք»:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսանողներին դիմավորեցին ֆակուլտետի մասին պատմող ֆիլմի ցուցադրությամբ, ապա պրոֆեսորադասախոսական կազմն ուղղեց իր բարեմաղթանքները: Դեկան Սարգիս Էլբակյանն ընդգծեց, որ վերջին տարիներին հատկապես բուհը լուրջ առաջընթաց է գրանցել. ուսուցման էլեկտրոնային եղանակ, նախադեպը չունեցող «Ամառային դպրոց» միջազգային ծրագիր, համագործակցություն առաջատար բուհերի հետ. «Ֆակուլտետը յուրահատուկ է նույնիսկ այս բուհական համակարգում, որտեղ համատեղվում են ուսումնական և ստեղծագործական գործընթացները»:

«ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ 2016»

Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, ՀՊՄՀ-ի ուսանողական խորհրդի հետ համատեղ իրականացվեց «Ամառային դպրոց 2016» միջազգային ծրագիրը, որին մասնակցեցին բուհի արտասահմանյան մի շարք գործընկեր համալսարանների ուսանողներ:

Արդեն 4-րդ տարին անցկացվող ձեռնարկի ընթացքում ծրագրի բազմալեզու մասնակիցները ծանոթանում են Հայաստանի գեղատեսիլ վայրերին, զարմանահրաշ բնությանը, հնագույն եկեղեցիներին ու տաճարներին, այցելում թանգարաններ և պատկերասրահներ, վայելում ժամանակակից Երևանը:

Ծրագրի մեկնարկին մասնակիցներին ողջունեցին Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Արա Երեմյանը և Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը: Նրանք վստահեցրին՝ ծրագիրը հնարավորություն կտա ոչ միայն ճանաչել Հայաստանը, այլև ամրապնդել տարբեր ժողովուրդների միջև մշակութային, բարեկամական կապերը և ունենալ նոր ընկերներ:

Այս տարի ծրագիրն ավելի ինտերակտիվ էր. ներառված էին թիմային խաղեր և առաջադրանքներ՝ նպաստելու Հայաստանի վերաբերյալ տեղեկատվությունների ընկալմանը ոչ ֆորմալ տարբերակով:

Առաջիկա երեք օրերի ընթացքում դպրոցի մասնակիցներն այցելեցին Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Մատենադարան, Գաֆեսճյանի ժամանակակից արվեստների թանգարան, իսկ Երևանում կազմակերպվեց քաղաքին և պատմությանը ծանոթանալու խաղ:

10-րյա ամառային դպրոցի ընթացքում մասնակիցներին ներկայացվեց Հայաստանի բարձրագույն կրթական համակարգը, մասնավորապես բուհի մանկավարժական գործունեությունը: Ծրագիրը հագեցած էր նաև սպորտային, մշակութային և ժամանցային միջոցառումներով:

«Ամառային դպրոց 2016»-ին մասնակցում էին 84 ուսանողներ Ֆինլանդիայի Օուլուի համալսարանից, Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանից, Լիտվայի Կրթական գիտությունների համալսարանից, Սանկտ Պետերբուրգի տնտեսագիտական համալսարանից, Մաքսիմ Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական համալսարանից, Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական համալսարանից, Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանից, Արցախի պետական համալսարանից և ՀՊՄՀ-ից:

«Հայաստանում ինձ ամենաշատը գրավեց մարդկանց բարությունը, հյուրընկալությունը, ընկերասիրությունը, ամեն պահի օգնության հասնելու պատրաստակամությունը, ինչն էապես բացակայում է մեր երկրում»- աղավնաձորյան Ամառային դպրոցից տպավորված նշում է Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի ուսանող Յանա Դոբըշը և հավելում, որ այս ճամփորդությունը մեծ դեր ունի իր կյանքում. առաջին անգամ է լինում սարերում, իսկ Արարատն իր ողջ հմայնքով տեսնելը նվիրական ցանկություններից մեկն էր:

Բելառուս ուսանողը ծրագրի շրջանակներում բազմաթիվ վայրերում է եղել ու դեռ կլինի, բայց շտապում է իր տպավորությունները փոխանցել Ցեղասպանության և Մանկավարժական համալսարանի թանգարանների մասին՝ վստահեցնելով, որ եղեռնի վերաբերյալ ամեն բառ անշնջելի հետք է թողել:

Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի ուսանողներ Պետեր Բեդոքն ու Սաբո Քրիսթիանը մարտին եղել են Հայաստանում. իրենց հիշողություններում երկիրն անկրկնելի է, մարդիկ՝ ջերմ, ժպտերես և հյուրընկալ: Սաբո Քրիսթիանը հիացմունքով է նշում, որ բազում հետաքրքիր ձեռնարկներից կազմված ծրագրում ինքն ընդգրկված է «Տորք Անգեղ»՝ հզորություն խորհրդանշող թիմում, որի անդամները պատրաստ են հաղթահարելու բոլոր մարտահրավերները:

Պետեր Բեդոքը Հայաստանը սիրելու կարևոր պատճառ ունի, քանի որ ուսումը մագիստրատուրայում շարունակելու է հայագիտության բաժնում: Նա դժվարանում է խոսել ծրագրի տպավորություններից. ասելիքը շատ է, ամեն վայրկյանը՝ չմոռացվող հիշողություն:

«Շատ եմ սիրում Հայաստանն ու Արցախը»,-խոստովանում է նա և որպես ապացույց մատնանշում իր սենյակի պատուհանը զարդարող Արցախի դրոշը:

Ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանի կարծիքով՝ ծրագրի մասնակիցների միջև այս օրերին չկան սահմաններ. «Ծրագրի հիմքում ընկած են ազգերի միասնության, համերաշխության, մարդասիրության, հավասարության, ընկերասիրության և կարևորագույն այլ գաղափարներ»:

Ներսիկ Մարգարյանը կարևորում է տարեցտարի օտարերկրյա մասնակիցների թվի ավելանալը, ինչը հնարավորություն է տալիս առավել լայն շրջանակներում ներկայացնել Հայաստանն ու Արցախը, նրանց պատմությունը, մշակույթն ու ավանդույթները:

Հերթական օրը սկսվեց Սևան ազգային պարկ գերհագեցած էքսկուրսիայով:

Ուսանողները նախ եղան «Հարսնաքար» լողափում, ապա լողափնյա ակտիվ հանգստից ու զվարճանքներից հետո այցելեցին Աղթամար թերակղզի, բարձրացան և դիտեցին թերակղզու ամենախոշոր կոթողը՝ Սևանավանքը:

«Մասնագիտությամբ պատմաբան լինելով և ուսանելով կաթոլիկ համալսարանում՝ առավել հետաքրքրական էր հայկական վանքերի ուսումնասիրությունն ու պատմական նոր բացահայտումներ անելը»,-ասաց Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան համալսարանի ուսանող Գարդիկ Դանիելը:

«Ամառային դպրոց»-ի մասնակիցների օրվա շարունակությունն անցավ ՀՊՄՀ-ի Աղավնաձորի ուսումնական բազայում, որտեղ միջազգային ծրագրում ընդգրկվածների համար դասախոսությամբ հանդես եկավ ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը:

Վերջինս ներկայացրեց մշակույթի ազդեցությունը կրթության վրա, մշակութային արժեքների ըմբռնման հիմնախնդիրներն ու մշակույթների երկխոսության կրթական արժեքը:

Տիգրան Միքայելյանն ընդգծեց, որ դասախոսության թեման արդիական է, որի հիմնական բովանդակային հենքը մշակույթների խորապես և օբյեկտիվ ճանաչողությունն է, նորն ու արդյունավետն ընկալելը, երբեմն նաև այլընտրանքային ճանապարհներ գտնելու անհրաժեշտությունը:

Աղավնաձորի ուսումնական բազայում «Ամառային դպրոց 2016»-ի մասնակիցների 8-րդ օրվա մեկնարկը սպորտային էր:

Օրեր շարունակ ծանոթանալով Հայաստանի տեսարժան ու պատմամշակութային վայրերին, ճանաչողական այցեր կատարելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան ճեմարան, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, հյուրընկալվելով Մանկավարժական համալսարան, ծանոթանալով բուհի ժամանակագրությանը, գործունեությանն ու կրթական համակարգին, ուսանողներն իրենց հերթական օրը սկսեցին՝ ուժերը փորձելով շաշկու, շախմատի, սեղանի թենիսի և վոլեյբոլի մրցումներում:

«Բարի գալուստ «Հրաշքների աշխարհ», որտեղ տարիներ առաջ մի թագավորության շնորհիվ միավորվեցին Հայաստանի, Արցախի, Բելառուսի, Հունգարիայի, Լիտվայի, Ռուսաստանի և Ֆինլանդիայի դքսությունները՝ ժողովուրդների և մշակույթների մերձեցման, համագործակցության և ընկերական կապեր ստեղծելու համար»,- օգոստոսի 18-ին Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում «Ամառային դպրոց 2016» միջազգային ուսանողական ծրագրի պաշտոնական փակման հանդիսավոր արարողությունն այսպես բացեցին ուսանող հանդիսավարները:

Վերջիններս մեծ ոգևորությամբ նկատեցին, որ փոքրիկ թագավորությունը հենց սկզբից գրավեց «դքսությունների» ուշադրությունը, որոնք ցանկացան միավորվել, դառնալ այդ ընտանիքի մի մասը. «Հայկական դիցաբանության աստվածների՝ Արամազդի, Անահիտի, Աստղիկի, Նանեի, Տորքի և Վանատուրի անուններով ստեղծվեց վեց թիմ, որոնցում ընդգրկված տարբեր ազգերի ներկայացուցիչներն օրեր շարունակ խմբային աշխատանքներով առավել մտերմիկ շփում հաստատեցին»,-հավելեցին նրանք, ապա ամբիոն հրավիրեցին բուհի ռեկտորին:

Ռուբեն Միրզախանյանը պրոֆեսոր-դասախոսական կազմի և ուսանողների անունից ողջունեց ամառային դպրոցի մասնակիցներին՝ համոզմունք հայտնելով, որ այս օրերին ուսանողները հասցրին ճանաչել Հայաստանը. «Վստահ եմ, որ մեր հայրենիքի գեղատեսիլ վայրերը, զարմանահրաշ բնությունը, հնագույն եկեղեցիներ, տաճարներ, հետաքրքրաշարժ թանգարաններ և պատկերասրահներ կատարած այցերը ցանկություն կառաջացնեն վերադառնալ Հայաստան: Ուրախությամբ պետք է ընդգծեմ, որ ծրագիրն ընդլայնում է իր աշխարհագրությունը. նախորդ տարիներին մասնակից բուհերի կողքին այսօր կան նորերը, որոնց հետ հաջորդ տարի դարձյալ կհանդիպենք»:

Ռուբեն Միրզախանյանը մասնակիցներին հանձնեց հավաստագրեր՝ հիշեցնելով, որ դրանք համարժեք են երեք կրեդիտի, ինչն ուսումնառության ընթացքում անհրաժեշտ է և օգտակար:

«Ամառային դպրոց 2016» միջազգային ուսանողական ծրագրի հերթական նորարարությունը կազմակերպիչների կողմից տրվող հանձնարարությունների միջոցով Երևանի ամենահայտնի վայրերը գտնելն էր և այդ մասին տեսաշար պատրաստելը:

Տեղանքի վերաբերյալ անցորդներից արված հարցումները, ճարտարապետության վերաբերյալ անցորդների կարծիքները, նկարահանած մի քանի ֆիլմերից հաղթանակ բերեց օրիգինալ և իմաստուն Արամազդի դստեր՝ «Անահիտ» թիմին, որի պատրաստած ֆիլմը ներկաներն ունկնդրեցին մեծ հետաքրքրությամբ:

Միջոցառման ավարտին մասնակից երկրների պատվիրակներն իրենց տպավորությունները ներկայացրին՝ Հայաստանը հյուրընկալ է, գեղեցիկ, առանձնահատուկ, իսկ Մանկավարժականի կազմակերպած ամառային դպրոցը՝ գերհագեցած և անմոռանալի. չեն ցանկանում, որ այն ավարտվի:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ 2016»

ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ

Մանկավարժական համալսարանի 11 ուսանողներ «Ամառային դպրոց 2016» ծրագրի շրջանակներում հյուրընկալվեցին Բելառուսի մանկավարժական համալսարանում: Տարբեր ազգերի ուսանողների հետ նրանք այցելեցին երկրի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, ծանոթացան երկրի պատմությանն ու ազգային ավանդույթներին:

Աբովյանականները մասնակցեցին նաև մեծ շուքով նշվող բելառուսական ազգային տոներին՝ «Իվան Կուպալա»-ին և «День вышиванки»-ին:

ՀՊՄՀ-ի ուսանողները միջոցառման ընթացքում ներկայացրին Կոմիտասի ստեղծագործություններից, ինչի շնորհիվ գրավեցին բելառուսական ԶԼՄ-ների ուշադրությունը. երկու օր շարունակ մամուլն իր հրապարակումներում ուսանողներին ներկայացրեց իբրև Բելառուսի կրթությանն ու մշակույթին ծանոթանալու նպատակով երկիր ժամանած հայ զբոսաշրջիկների:

Տեղի ամենաակտիվ ճամբարներից «Սպուտնիկ» կազմակերպված այցը համընկավ հայերի Վարդավառի տոնին, և հայ ուսանողներն այդ տոնը տեղափոխեցին Բելառուս. տարբեր ազգերի ներկայացուցիչներ Վարդավառի տոնը նշեցին ինչպես հայերը:

Ծրագրի հերթական հագեցած օրը մասնակիցներն այցելեցին «Միր» և «Նեսվիժ» դղյակներ՝ Բելառուսի ամենաերևելի և տեսարժան վայրերը, որտեղ ծանոթացան հին կայսրերի ապրելակերպին, իմացան թե ինչպես են նրանք իրենց շքեղ դղյակներում պատրաստվել բոլոր պատերազմներին:

Բացի զբոսանքից, ուսանողներն անցկացրին նաև մարզական հագեցած ժամանակ, իսկ Բելառուսի մանկավարժական համալսարանի կիրառական բաժնի դասախոսների օգնությամբ սովորեցին պատրաստել ազգային տիկնիկներ:

Այցի ընթացքում կազմակերպվեց նաև հանդիպում տեղի հայերի հետ, և օրն անցավ հայկական երգ ու պարով:

Ծրագրի շրջանակներում ուսանողները ներկա եղան նաև Բելառուսի Մանկավարժական համալսարանում մագիստրատուրայի համակարգին և պատմությանը նվիրված դասախոսությանը, այցելեցին Բելառուսի ազգային գրադարան:

Բելառուսյան ծրագրի հանդիսավոր փակման ժամանակ մասնակիցները ներկայացրին իրենց համալսարանը, երկիրը, ազգային երգերն ու պարերը, նվերներ փոխանակեցին, պատվոգրեր ստացան և հրաժեշտ տալով միմյանց՝ խոստացան աննախադեպ ծրագրի շրջանակներում կրկին հանդիպել:

ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 1-ը «Ամառային դպրոց» ծրագրին շրջանակում ՀՊՄՀ-ի 10 ուսանողներ հյուրընկալվեցին Հունգարիայում: Առաջին իսկ օրվանից ուսանողներին օտար երկրում իրենց զգացին ջերմ ու հյուրընկալ մթնոլորտում:

Ուսանողների համար կազմակերպվեցին հունգարերենի դասընթացներ Պազմանի Պիտեր Կաթոլիկական համալսարանում՝ Հունգարիայի արվեստների, պատմության, սոցիոլոգիայի և այլ թեմաներով, իսկ վերջում՝ կոնֆերանս և պրեզենտացիաների ներկայացում:

Ծրագրի մասնակիցները եղան բազմաթիվ մշակութային վայրերում՝ ուսումնական գործընթացի հետ համատեղ ուսումնասիրեցին Հունգարիայի մշակույթն ու պատմությունը:

Ուսանողները եղան Էստարգոն քաղաքում, որտեղ կազմակերպվեց համալսարանի հնէաբանական նախագիծը: Այստեղ հանդիպեցին նաև օտարերկրյա ուսանողների հետ, ծանոթացան ֆակուլտետի պատմությանը, եղան նաև Մայր տաճարում: Այցելելով Պիլիսչաբա, որտեղ կազմակերպվել է հիմնական դասընթացները, ուսանողները շրջեցին համալսարանում, ծանոթացան բուհի կառուցվածքին և գործունեությանը: Ապա եղան Հունգարիայի Ազգային թանգարանում, այցելեցին «Ռոբերտ Կապա կենտրոն» ժամանակակից լուսանկարների ցուցահանդես, յուրահատուկ «Անտեսանելի ցուցահանդես», որտեղ քեզ զգում էիր ինչպես կույրը: Ուսանողներն այցելեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերին նվիրված թանգարան՝ «Տերորի տուն»:

Ուսանողներին հատկապես դուր էր եկել այն հանգամանքը, որ իրենց հնարավորություն էր տրվել սեփական ուժերով բացահայտել քաղաքը, քարտեզի միջոցով ինքնուրույն գտնել ճանաչված վայրերը և այլն:

«Հատկապես հետաքրքիր էին դասախոս-ուսանող փոխհարաբերությունները՝ ազատ և անկաշկանդ, կցանկանայի, որ մեզ մոտ էլ այդպես լիներ»,-ասում է Պատմության և իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Արարատ Բաբաջանյանը, ով ձեռք է բերել ընկերներ, ծանոթացել այդ երկրի պատմությանն ու մշակույթին, կրթական համակարգին:

Խմբի բոլոր անդամները շնորհակալ են ղեկավարությանն ու ծրագրի կազմակերպիչներին՝ հիանալի և անմոռանալի հնարավորության համար:

ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Մանկավարժական և Օուլուի համալսարանի համագործակցության շնորհիվ բուհի 10 ուսանողներ «Ամառային դպրոց» միջազգային ծրագրի շրջանակներում եղան Ֆինլանդիայում: Այդ ընթացքում մասնակիցները ծանոթացան երկրի կրթական համակարգին, ֆինն ժողովրդին, այլազգի ուսանողներին, շրջայց կատարեցին տարբեր ուսումնական հաստատություններում:

Այցի շրջանակներում աբովյանականները 1-2 օրով եղան տեղի հյուրընկալ ընտանիքներում, ապա բաժանվելով տարբեր ազգերից կազմված 6 խմբերի՝ անցան ծրագրի կարևորագույն առաքելությանը: Ֆինլանդիայում «Ամառային դպրոց»-ի ողջ ընթացքում ՀՊՄՀ-ի ուսանողներին ուղեկցեցին Օուլուի համալսարանի Կրթության ֆակուլտետի պրակտիկայի բաժնի ղեկավար Վեսա-Մատտի Սարենիուսը և Մանկավարժականի ուսանող Մարիա Թումանյանը, ով ներկայումս ուսումը շարունակում է Օուլուի համալսարանում:

Ուսումնաճանաչողական շրջայցերը, բազմաբնույթ հետաքրքիր խաղերը, ամենատարբեր թեմաների շուրջ դաս-քննարկումները կազմում էին ծրագրի մասնակիցների ամենօրյա գրաֆիկն ու այն դարձնում առավել հետաքրքիր:

Ֆինլանդիա մեկնած ուսանողների խոսքով՝ այցն առանձնացավ ոչ միայն երկրի տեսարժան վայրեր այցելելով, այլև նոր ընկերների, կապերի ձեռքբերմամբ, միջմշակութային հաղորդակցության, օտար լեզուների իմացության ամրապնդմամբ:

ԼԻՏՎԱՅՈՒՄ

«Ամառային դպրոց 2016» միջազգային ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանի 10 ուսանողներ և մեկ դասախոս հուլիսի 30-ից օգոստոսի 10-ը մեկնեցին Լիտվա:

Ծրագրի շրջանակներում մասնակիցները ծանոթացան ոչ միայն երկրի պատմամշակութային արժեքներին, այլև կրթական համակարգին և լիտվերենին:

Տրակայի ամրոց, հնագույն մայրաքաղաք Կերնավեն, Կաունաս, Լիտվայի ազգային ապրելակերպի թանգարան՝ Ռումշիշկես և բազմաթիվ այլ պատմական և մշակութային արժեք ներկայացնող կոթողներ, դղյակներ, թանգարաններ, որոնց միջոցով աբովյանականները ծանոթացան Լիտվայի պատմությանը, նրանց ազգային ավանդույթներին, արժեհամակարգին և կենցաղին, ինչը լրացնում էին լիտվացիների ավանդական ուտեստները, ազգային երգն ու պարը:

Ուսանողների հագեցած ուսումնական ծրագրի շնորհիվ կարողացան սեղմ ժամկետներում որոշ չափով տիրապետել լիտվերենին, ակտիվ մասնակցություն ունենալ Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի կազմակերպած հետաքրքիր միջոցառումներին ու քննարկումներին:

19 երկրների ուսանողների միավորած ծրագիրն ամփոփվեց մասնակից երկրների մշակութային արժեքների ներկայացմամբ, որի ընթացքում հայ ուսանողները ներկայացրին հայ ժողովրդի պատմությունը, ազգային երգն ու պարը, ազգային խոհանոցի որոշ ուտեստներ:

Լիտվա մեկնած ուսանողները միակարծիք են՝ բուհի ընձեռած հնարավորությունը բացառիկ էր և շատ օգտակար, ինչի շնորհիվ ունեցան տպավորչ ու հիշարժան օրեր, ձեռք բերեցին նոր ընկերներ, գիտելիքներ, լեզվական կարողություններ:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

«Ամառային դպրոց 2016» միջազգային ծրագրի շրջանակներում ՀՊՄՀ-ի 10 ուսանողներ օգոստոսի 8-18-ը եղան Մոսկվայում, որտեղ նրանց հյուրընկալեցին Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի դասախոսները և ուսանողները:

Անմոռանալի 10 օրերի ընթացքում աբովյանականները ծանոթացան նրանց կրթական համակարգին, պատմամշակութային արժեքներին, եղան բազմաթիվ տեսարժան վայրերում: Հայ ուսանողները մոսկովյան ընկերների հետ այցելեցին Կրեմլի մեծ պալատ, եղան այն սենյակում, որտեղ երդվում են Ռուսաստանի Դաշնության նախագահները, «Հյուսիսային եղջերուների արգելանոցում», Տիեզերագնացների թանգարանում, Տրետյակովյան ցուցասրահում, զբոսնեցին Ալեքսանդրովյան այգում, ինչպես նաև «Богородской» խաղալիքների արհեստանոցում, որտեղ տեսան, թե ինչպես են պատրաստվում ռուսական փայտյա խաղալիքները, ծանոթացան նրանց պատմությանը և իրենք էլ պատրաստեցին խաղալիքներ: Ուսանողներն այցելեցին նաև «Останкино» հեռուստաընկերություն, տեսան, թե ինչպես և որտեղ է նկարահանվում «Спокойной ночи, малыши», «Здорово жить» с Малышевой» հեռուստածրագրերը, ինչպես նաև հեռուստաաշտարակի 337մ բարձրությունից հիացան Մասկվայի շքեղությամբ:

Մոսկովյան «Ամառային դպրոց»-ի մասնակիցներն ամեն օր ունենում էին տարբեր թեմաների շուրջ սեմինարներ, իսկ յուրաքանչյուր օրվա ավարտին ժյուրիի դատին ներկայացնում օրվա թեմային վերաբերող պատկերային ներկայացումները: Ծրագրի վերջին օրը մասնակիցներն ստացան մասնակցության հավաստագրեր և ներկայացրին «Ամառային դպրոց» ծրագրի իրենց տարբերակները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում հուլիսի 12-ին քննարկեցին հայկական քաղաքակրթության արդի հիմնախնդիրները: Սեմինար-քննարկման նախաձեռնությունը ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետինն էր:

Ինչպես նշեց իր ներածական խոսքում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, համալսարանի ամբիոնի վարիչ Ռուբեն Սաֆրաստյանը, համալսարանում բացված լաբորատորիայի հիմնական նպատակը հայկական քաղաքակրթության հայեցակարգի ստեղծումն է:

Այդ ճանապարհի առաջին քայլը կազմակերպված գիտաժողովն էր, որին բացի մանկավարժական համալսարանի մասնակիցներից հրավիրվել էին շահագրգիռ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ըստ Ռ.Սաֆրաստյանի՝ համալսարանն ունի համապատասխան գիտական ներուժ, որի կոլեկտիվ ջանքերը կարող է նպատակաուղղել խնդրի իրականացմանը: Եվ այդ նպատակին հասնելու համար պետք չէ որևէ մեկին համոզել, այլ պետք է համագործակցել: Հայկական քաղաքակրթության արդի հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ջանքերը կօգնեն դիմակայել 21-րդ դարի օրեցօր վտանգավոր դարձող մարտահրավերներին: Այդ տեսանկյունից բանախոսը տեղին ու ճիշտ համարեց լաբորատորիայի ստեղծումը և շնորհակալություն հայտնեց ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը վստահեցրեց, որ ապագայում լաբորատորիան կդառնա համալսարանի ներսում գործող ինստիտուտ, որը բացառիկ դեր կունենա հայ հասարակության կյանքում: Նա անդրադարձավ դպրոցաշինության մեջ արմատական փոփոխություններ իրականացնելու հարցին և նրա հետ կապված այն բոլոր խնդիրներին, որոնք պայմանավորված են ուսուցչի աշխարհայացքով ու պատրաստվածությամբ:

«Բոլոր մանկավարժները պետք է լինեն հայրենասեր»,-ասաց ռեկտորը:

Համալսարանի ապագան կապելով գիտահետազոտական գործունեության հետ, Ռ. Միրզախանյանն անդրադարձավ հայկական քաղաքակրթության հիմնահարցերն ուսումնասիրող լաբորատորիայի գործունեությանը, ակնկալելով մագիստրոսների մեծ մասի գիտահետազոտական հոդվածներն՝ ուղղված վերոհիշյալ խնդիրների հետազոտական աշխատանքներին:

Ռեկտորը միաժամանակ անդրադարձավ համալսարանի օրեցօր ընդլայնվող միջազգային կապերին և եվրոպական համալսարաններում հայագիտական ամբիոնների ստեղծմանը: «Մեր նպատակն է հայկական քաղաքակրթության պատմությունը ըմբռնելի դարձնել աշխարհին»,-ամփոփեց ռեկտորը՝ ընդգծելով հարցի մոտեցման հրապարակայնությունը:

Ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանն ընդգծեց, որ լաբորատորիան համահամալսարանական է, բայց մեծագույն աշխատանքն իրենցն է, լաբորատորիայի գործունեությունն էլ պետք է սահմանափակվի ոչ միայն Հայաստանով, այլև հայ իրականության շրջանակներում:

«Այս լաբորատորիան կոչված է տալու շատ առանցքային հարցերի պատասխաններ, կա հետաքրքրվածություն, բայց հարցի գիտական շատ մոտեցումներ դեռևս տեսական փուլում են և նոր ձևակերպումների կարիք ունեն»:

Պլենար նիստի քննարկմանը ներկայացված զեկուցումները վերաբերում էին հայ ազգային արժեքների պահպանմանը՝ որպես ժողովրդի ու պետության գոյության գրավական, հայոց պատմության պարբերացման քաղաքակրթական մոտեցման խնդրին, հայոց քաղաքակրթական հոլովույթում անհատի դերին, Հայաստանում քրիստոնեության ընդունման հոգևոր նախադրյալներին, սփյուռքի քաղաքակրթական դերակատարությանը, համաշխարհայնացման արդի փուլում հայոց ազգային արժեհամակարգի պահպանման խնդիրներին:

Զեկուցողները երկրորդ նիստում խոսեցին 19-րդ դարի ֆրանսիացի հայագետների գնահատմամբ հայկական քաղաքակրթական արժեքների հայ հասարակության տարածական կազմակերպման առանձնահատկությունների և քաղաքակրթական հարացույցի փոխակերպության խնդրի (ԺԱ դարի 2-րդ կեսի), մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին Հայաստանում պետականության զարգացման, հայկական քաղաքակրթության տեսական հարցադրումների մասին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Անցած ուսումնական տարում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի և բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ավարտական վկայականներ է ստացել է 2805 ուսանող (այդ թվում՝ 16-ը ոչ պետական այլ բուհերից), որից՝

Մագիստրատուրան՝ 734 (առկա՝ 638, հեռակա՝ 96) ուսանող

Բակալավրիատը՝ 2054 (առկա՝1309, հեռակա՝ 745) ուսանող

Գերազանցությամբ համալսարանն ավարտել է 94 մագիստրոս և 206 բակալավր:

ԱՆԴՐԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

Աշխարհագրական գիտությունը մեծ կորուստ կրեց Մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր Բորիս Պուտիկի Մնացականյանի մահով:

Անգնահատելի է Բ. Մնացականյանի ավանդը ՀՀ ջրային ռեսուրսների գնահատման և ռացիոնալ օգտագործման գործում: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Ապարանի, Սառնաղբյուրի, Կառնուտի և Վարդաքարի ջրամբարների կառուցման ջրաբանական հաշվարկներին, մասնակցել է Սիրիայի Արաբական Հանրապետությունում Համաշխարհային բանկի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող մի շարք գործող ջրամբարների (Կաստուն, Ադուան, Բուստան, Մաշուկ, Ջովադիե, Ջահարիի, Բաբ էլ Խադիդ) կայունությունն ապահովող հետազոտական և նախագծային աշխատանքներին՝ վերահաշվարկելով նրանց ջրային հաշվեկշիռները և առավելագույն ելքերը:

Բ. Մնացականյանը մասնակցել է նաև Խադիդ և Հարեմ ջրամբարների նախագծման աշխատանքներին (ջրաբանական հաշվարկներ) և Ալ-Հուսեյին ջրամբարի պատվարի նախագծի ջրաբանական հաշվարկների փորձաքննությանը և ստուգմանը:

Բ. Մնացականյանը երկար տարիներ ղեկավարել է նաև Երևանի պետական համալսարանի ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը:

Միաժամանակ անգնահատելի է նրա ավանդը սերնդակրթության և երիտասարդ գիտնականների պատրաստման գործում:

Բազմավաստակ գիտնականի, մտավորականի և մարդու կերպարը երկար կմնա նրա աշխատանքային ընկերների, ուսանողների, մագիստրոսների և նրան ճանաչող յուրաքանչյուր մարդու հիշողության մեջ:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Աստվածաբանության և կրոնագիտության եզակի գրքեր՝ գրադարանին

Աստվածաբան-կրոնագետ Գաբրիել Վահանյանի դուստր Նոյեմի Վահանյանը Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանին օրերս նվիրեց հոր գրադարանի շուրջ 300 գիրք:

Գ. Վահանյանը դասախոսել է մի շարք հայտնի համալսարաններում, երկար տարիներ եղել է Սիրակուզայի համալսարանի կրոնագիտության դոկտորանտուրայի հիմնադիր տնօրենը: Հեղինակի անգլերեն և ֆրանսերեն գրքերը կովկասյան տարածաշրջանում եզակի են:

Գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը նվիրաբերված գրականությունը համարեց գրադարանի և ուսանողների համար մեծ ձեռքբերում

և վստահեցրեց, որ այն առավել քան պիտանի կլինի ուսուցման գործընթացում: Վերջինս ներկայացրեց նաև կրոնագիտության ոլորտում Գաբրիել Վահանյանի անցած ճանապարհը, ինչպես նաև գործունեությունը մասնագետների պատրաստման գործում:

Նվիրատվությանը միջնորդել են ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ Հասմիկ Հովհաննիսյանը և ամբիոնի դոցենտ Անդրանիկ Ստեփանյանը:

Հասմիկ Հովհաննիսյանը վերոհիշյալ գրականության առկայությունը համալսարանում մեծ ձեռքբերում համարեց: «Սա ձեռքբերում է առհասարակ հայ իրականության մեջ գիտական տվյալ ոլորտին վերաբերող մասնագետների համար: Այսպիսի գրականություն Հայաստանում դեռևս չկա: Այս գրականությունը մենք կօգտագործենք և՛ ուսումնամանկավարժական պրատկիկայում, և՛ գիտական աշխատանքների ոլորտներում»:

Անդրանիկ Ստեփանյանը լսարանին հակիրճ ներկայացեց հայտնի աստվածաբան-կրոնագետի կյանքի պատմությունը՝ ընդգծելով. «Նա հայ մարդու համար և հայ իրականության մեջ պարծանք ու հպարտություն է»:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները և փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 5-ից 30-ը:

Մանրամասների համար դիմել ֆակուլտետների դեկանատներ:

ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների պլանավորման և կազմակերպման բաժին

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները				Ընդունելության տեղ	այդ թվում՝	Ուսման վարձը հազ. դ.
		Մրցութային			Ոչ մրցութային		ԲՁ	
1.	2	3			4	5	6	7
011201.00.6	Նախադպրոցական մանկավարժություն							
	011201.01.6 Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Օտլ (գ)**			20	2	325
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն							
	011301.03.6 Սոցիալական մանկավարժություն	Հլգ (գ)	Մ (գ)** կամ Օտլ(գ)**			25	2	310
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ)**			100	10	410
	011301.02.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ	Ռլ (գ)	Մ(գ)**		Հլգ (գ) *	15	1	410
011302.00.06	Հատուկ մանկավարժություն							
	011302.01.6 Սուրդոմանկավարժություն	Հլգ (գ)	Կ (գ)**			15	1	260
	011302.02.6 Տիֆլոմանկավարժություն	Հլգ (գ)	Կ (գ)**			15	1	260
	011302.03.6 Օլիգոֆրենոմանկավարժություն	Հլգ (գ)	Կ (գ)**			15	1	260
	011302.04.6 Լոգոպեդիա	Հլգ (գ)	Կ (գ)**			40	4	290
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն							
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ)* կամ Օտլ (գ)*	100	10	255
	011401.04.6 Ֆիզիկա	Մ (գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ)** կամ Մ(գ)**		Հլգ (գ)*	25	2	240
	011401.07.6 Բնագիտություն	Ա (գ) կամ Կ (գ)	Կ (գ)** կամ Ա (գ)**		Հլգ (գ)*	20	2	240
	011401.12.6 Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	Հլգ (գ)	Մ(գ)**		Ֆ (գ)*	35	3	275
	011401.05.6 Մաթեմատիկա	Մ (գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ)** կամ Մ(գ)**		Հլգ (գ)*	35	3	240
	011401.06.6 Ինֆորմատիկա	Մ (գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ)** կամ Մ(գ)**		Հլգ (գ)*	40	4	290
	011401.02.6 Քիմիա	Ք (գ)	Մ (գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ (գ)*	25	2	240
	011401.01.6 Կենսաբանություն	Կ (գ)	Քանակ (գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ (գ)*	25	2	240
	011401.03.6 Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	45	4	250
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)		Հլգ (գ)*	90	9	295
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ (գ)*	40	4	340
	011401.13.6 Երաժշտական կրթություն	ԵՏՍ (գ, բ)	ՆԵՍԿ և երգ		Հլգ (գ)*	30	3	310
	011401.14.6 Պարարվեստ	Դպար	ՀԺ կամ ԺՊՄ պար		Հլգ (գ)*	30	3	340
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (բ)	Անգլ (գ)		Հլգ (գ)*	75	7	410
	011401.22.6 Գերմաներեն լեզու և գրականություն	Գլ (բ)	Գլ (գ)		Հլգ (գ)*	15	1	385
	011401.23.6 Ֆրանսերեն լեզու և գրականություն	Ֆր (բ)	Ֆր (գ)		Հլգ (գ)*	15	1	385
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (բ)	Ռլգ (գ)		Հլգ (գ)*	80	8	255
	011401.08.6 Հասարակագիտություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ(գ)		Հլգ (գ)*	50	5	315
021101.00.6	Տեսալսողական արվեստ							
	021101.01.6 Գեղարվեստական լուսանկարչություն	ԳԼՀ (բ)	ՄՀ (բ)		Հլգ (գ)*	10	1	330
	021101.02.6 Օպերատորություն	ՕՊՀ (բ)	ՄՀ (բ)		Հլգ (գ)*	10	1	330
021801.00.6	Արվեստի տեսություն և պատմություն							
	021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	ԸԱՊ (բ)	ԿՏ (գ)		Հլգ (գ)*	20	2	300
031301.00.6	Հոգեբանություն							
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ (գ)	Օտլ(գ)** կամ Կ(գ)**			90	9	330
031401.00.6	Սոցիոլոգիա							
	031401.01.6 Սոցիոլոգիա	Հլգ (գ)	Օտլ(գ)**		Մ(գ)*	50	5	335
031501.00.6	Մշակութաբանություն							
	031501.01.6 Մշակութաբանություն	ՀԺՊ (գ) կամ ԸՊ (գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*	30	3	285
032201.00.6	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ							
	032201.01.6 Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	Հլգ (գ)	Օտլ (գ)**		ՀԺՊ (գ)*	20	2	240
041301.00.6	Կառավարում							
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	ՍՄԳԿ (գ,բ)	ՄՊ(բ)		Հլգ (գ)*	15	1	330
092301.00.6	Սոցիալական աշխատանք							
	092301.01.6 Սոցիալական աշխատանք	Հլգ (գ)	Օտլ (գ)**		Մ (գ)*	35	3	300

Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքի սահմանափակման: Հեռակա ուսուցումն իրականացվում է «Մանկավարժության բակալավր» կրթական ծրագրով ուսուցման 5 տարի տևողությամբ, վճարովի հիմունքներով:

Դիմորդներն իրենց ընտրությամբ կարող են հայտագրել և մասնակցել միայն մեկ մասնագիտության մրցույթի:

Համալսարան ընդունվելու դեպքում, ներքոհիշյալ կարգավիճակ ունեցող դիմորդներն օգտվում են ուսումնական վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից.

1) 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը հակացուցված չէ:

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության և ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունների տված տեղեկանքների: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում համալսարան են ընդունվում մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2016 օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը, քննությունները՝ սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 10-ը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	բանավոր
(գ)	գրավոր
Ա	Աշխարհագրություն
Անգլ	Անգլերեն լեզու
Գլ	Գերմաներեն լեզու
Գծն	Գծանկար
Գն	Գեղանկար
ԳԼՀ	Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ
Դպար	Դասական պար
ԵՏՍ	Երաժշտության տեսություն և սոլֆեջիո
ԸԱՊ	Ընդհանուր արվեստի պատմություն
ԸՊ	Ընդհանուր պատմություն
ԺՊ	Ժամանակակից պարահանդեսային պար
ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն
ՀԺ	Հայկական ժողովրդական պար
Հլգ	Հայոց լեզու և գրականություն
ՍՄԳԿ	Սոցիալ մշակութային գործունեության կազմակերպում
Ռլ	Ռուսաց լեզու
Ռլգ	Ռուսաց լեզու և գրականություն
Կ	Կենսաբանություն
ԿՏ	Կերպարվեստի տեսություն
Մ	Մաթեմատիկա
ՄՊ	Մշակույթի պատմություն
ՄՀ	Մասնագիտական հարցազրույց
Ք	Քիմիա
ՆԵՍԿ	Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում
Ֆ	Ֆիզիկա
Ֆրլ	Ֆրանսերեն լեզու
Օտլ	ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն
ՕՊՀ	Օպերատորության հիմունքներ
*	Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:
**	Թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 13.09. 2016 թ.